

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Դավիթ Օհանյան

«Նուտիկանության կրթահամալիրի ասպիրանտ»

19-րդ դարում ինդիվիդուալիզմի և կամքի ինքնավարության գաղափարների ազդեցության տակ կոնտինենտալ երկրների քաղաքացիական իրավունքում, որոնց հիման վրա ստեղծվեց պայմանագրի կոնսենսուալ (կլասիկ) մոդելը, մեկնաբանման սուբյեկտիվ մոտեցումը սկսեց գերիշխել: Եթե պայմանագրային պարտավորությունները հաստատվում են սեփական հայեցողությամբ, ապա դատարանի միակ նպատակն է բացահայտել այն, ինչ կողմերը պայմանավորվել են, և հաստատել նրանց իրական կամքը¹:

Խոսքի օբյեկտիվ բազմիմաստությունը և ընկալման սուբյեկտիվ տարբերությունները՝ որպես պայմանագրային վեճի մեկնաբանման նախադրյալներ, պայմանագրի մեկնաբանման սուբյեկտիվ և օբյեկտիվ տեսությունների ձևավորման հիմք դարձան:

Կոնսենսուալ մոդելի տեսանկյունից պայմանագրի էությունն այն կնքող կողմերի կամքի համընկնման կոնսենսուսն (համաձայնություն) է²: Այդ իսկ պատճառով սուբյեկտիվ մոտեցման շրջանակներում պայմանագրի պայմանի մեկնաբանման նպատակը կողմերի իրական կամքի հաստատումն է: Խոսքը այն կամքի մասին է, որը ձևավորվել է այն կողմ արտաքին նշաններում (պայման, թղթակցություն, հետագա վարքագիծ): Ուստի պետք է հաջողված համարել իրական կամքը որպես էմպիրիկ կամք համարելու միտումը³, այսինքն՝ այն մտադրությունը, որը կարող է սահմանվել ուղղակի ապացույցների հիման վրա և վկայել այն մասին, թե կողմերը ինչպիսի իրավական հետևանքներ էին ցանկանում պայմանագրի կնքման ժամանակ:

Պայմանագրի կլասիկ մոդելը դրվեց եվրոպական կոդիֆիկացիաների հիմքում, այդ իսկ պատճառով ազգային օրենքներում՝ ընդունված 19-րդ դարում, պայմանագրի մեկնաբանման նորմերը սուբյեկտիվ են: Այսպես, ըստ Ֆրանսիայի քաղ. օր. (*Code civil*) 1156-րդ հոդվածի՝ համաձայնությունը քննելիս առաջին հերթին պետք է ուսումնասիրել, թե ինչպիսին է եղել պայմանավորվող կողմերի փոխադարձ մտադրությունը, այլ ոչ թե կառչել արտահայտությունների տառացի իմաստից: Համանման կարգավորում կա նաև Գերմանիայի քաղաքացիական կանոնագրում (*Bürgerliches Gesetzbuch, BGB*), որի 133-րդ հոդվածի համաձայն՝ կամարտահայտությունը մեկնաբանելիս անհրաժեշտ է հետևել կողմերի իրական կամքին՝ չկաշկանդվելով արտահայտությունների տառացի մեկնաբանությամբ⁴:

Պայմանագրի մեկնաբանման սուբյեկտիվ տեսության դրսևորումներ կարելի է հանդիպել ոչ միայն եվրոպական երկրների ազգային օրենսդրություններում, այլ

¹Տե՛ս Zimmerman R. The Law of Obligations, Roman Foundations of the Civilian Tradition, NY, 1996, էջ 636:

² Տե՛ս *Беклиничева И.В.* Гражданско-правовой договор: классическая традиция и современные тенденции. М. 2006. էջ 56:

³Տե՛ս Luderitz A. Auslegung von Rechtsgeschäften, Köln, 1966, էջ338:

⁴Սակայն պետք է նկատել, որ մեկնաբանման ֆրանսիական և հատկապես գերմանական ժամանակակից մոտեցումները դժվար թե կարելի է համարել մաքուր սուբյեկտիվ, քանզի դրանցում լայնորեն կիրառվում են այնպիսի կառուցակարգեր, որոնք հիմնված են օբյեկտիվ նախադրյալների վրա:

նաև պայմանագրային իրավունքի միջազգային ունիֆիկացիաներում: Այսպես ՈւՆԻԴՐՈՒԲ-ի սկզբունքների (2016թ. խմբագրությամբ)¹ 4-րդ գլուխը, որը նվիրված է պայմանագրի մեկնաբանմանը, սկսվում է հետևյալ կարգավորումով. պայմանագիրը պետք է մեկնաբանել ըստ կողմերի ընդհանուր մտադրությունների (4.1 հոդված, 1-ին կետ): Համանման կարգավորում կա նաև Եվրոպական պայմանագրային իրավունքի սկզբունքների (The Principles of European Contract Law)² 5:101 հոդվածի 1-ին կետում, որի համաձայն՝ պայմանագիրը մեկնաբանվում է կողմերի ընդհանուր մտադրություններին համապատասխան, նույնիսկ եթե այն տարբերվում է բառացի իմաստից: Ընդհանուր մտադրության նախապատվությունից չեն հրաժարվել նաև Եվրոպական քաղաքացիական օրենսգրքի ընդհանուր մոդելի նախագծի (*The Draft Common Frame of Reference*, 8:101 հոդված, այսուհետ՝ *DCFR*)³ հեղինակները:

Վերոնշյալ նորմերը, որոնք արտահայտում են կողմերի մտադրությունների առավելությունը պայմանագրի տեքստի նկատմամբ, առաջին հերթին ուղղված են կողմերի կամքի ինքնավարության և պայմանագրի ազատության սկզբունքների պահպանությանը, ինչը դոկտրինայի տեսանկյունից սուբյեկտիվ մոտեցման տրամաբանական հիմքն է: Միևնույն ժամանակ միայն սուբյեկտիվ մոտեցման կիրառումը կարող է խախտել այն կողմի շահերը, որին հասցեագրված է այդ կամարտահայտությունը: Այլ խոսքերով՝ հարց է առաջանում՝ կողմերից ո՞ր մեկի կամքի մասին է խոսվում: Վերոնշյալ իրավական կարգավորումներում խոսքը ընդհանուր կամքի մասին է: Սակայն երկու կողմերը միշտ չէ, որ կարող են միաժամանակ լինել վիճելի պայմանի հեղինակ: Անորոշ ձևակերպումը, որպես կանոն, կատարում է կողմերից մեկը, որը առաջարկել է պայմանը կամ պայմանագրի նախագիծը, ուստի պայմանագրի մասով պետք է խոսել վիճելի պայմանի հեղինակի մասին: Սակայն մի կողմի կամքին հետևելը, որը վիճելի պայմանի հեղինակն է, շիսկ է պարունակում, քանի որ հնարավոր է՝ խախտվի մյուսի շահերը, որին հասցեագրված է այդ պայմանը: Չի կարելի արհամարհել այն կողմի տեսակետը, որին ուղղված է եղել կամարտահայտությունը, և որը հենվում էր այն բանի վրա, թե ինչպես է պայմանն արձանագրվել տեքստում: Այդ իսկ պատճառով պայմանագրի մեկնաբանման ժամանակ դատարանը չի կարող սահմանափակվել մի կողմի (**դիմող կողմ**) ներքին կամքի ուսումնասիրմամբ՝ ի վնաս մյուսի (**հասցեատեր կողմ**) շահերի: Այս ամենի տեսական հիմքերը դրված են գերմանական դոկտրինում և պրակտիկայում, որոնց համար ելակետային հասկացություն է համարվում ոչ թե պայմանագիրը (*Vertrag*), այլ կամարտահայտությունը (*Erklärung*): Սուբյեկտիվ մոտեցումը կիրառելիս մեծ դեր է խաղում այն, **թե արդյոք հասցեատեր կողմը գիտեր կամ չէր կարող չիմանալ դիմող կողմի մտադրության մասին**:

Այս առումով գերմանական գրականության մեջ մշակվել է մի թեզ, որի համաձայն՝ վճռորոշ նշանակությունը պետք է տրվի մյուս կողմի կամարտահայտության բացահայտմանը⁴: Այս տեսակետը հիմնվում է գործարքում կամքի և կամահայտության տեսության վրա, որի էությունն այն է, որ գործարքի իրավական հետևանքները ոչ այնքան վերաբերում են կամքին (*Wille*), այսինքն՝ անձի գործարք կնքելու ներքին որոշմանը, որքան այդ կամքի արտաքին դրսևորմանը, այսինքն՝ կամահայտությանը (*Erklärung*): Ինչպես նշում է Ա. Մանիգկը, այդ մոտեցման հիմքը դրված է Ֆրիդրիխ Կարլ Ֆոն Սավինյիի աշխատանքներում, որը նշում էր. քանի որ իրականում կամքը պետք է դիտարկվի որպես միակ նշանակալի փաստ, որը ազ-

¹ UNIDROIT, International institute for the unification of privatelaw St'u <https://www.unidroit.org/instruments/commercial-contracts/unidroit-principles-2016>:

² St'u https://www.trans-lex.org/400200/_pecl/#head_83:

³ Principles, Definitions and Model Rules of European Private Law. Draft Common Frame of Reference., St'u (http://ec.europa.eu/justice/contract/files/european-private-law_en.pdf):

⁴ St'u Vogenauer S. Interpretation of Contracts: Concluding Comparative Observations. էջ 4:

դուրմ է իրական լինելու վրա, և միայն այն, որ դա ներքին, անտեսանելի երևույթ է, մեզ անհրաժեշտ է որոշակի նշան, որի միջոցով այն կարող է ճանաչելի դառնալ ուրիշների համար, և այդպիսի նշան, որի միջոցով բացվում է կամքը, կամարտահայտությունն է¹: Անվիճելի այն փաստը, որ կամքը՝ որպես ներքին գործընթաց, չի կարող լինել մեկնաբանման օբյեկտ, որովհետև մեկնաբանման ժամանակ միշտ օգտագործվում են արտաքին դրսևորման աղբյուրներ, այսինքն՝ մեկնաբանման ենթակա է կամահայտնությունը:

Միևնույն ժամանակ իրական կամքի (*wirkliche Wille*) հաստատումը դիտարկվում է որպես պայմանագրի մեկնաբանման նպատակ, ինչպես դա ամրագրված է Կանոնագրքի 133-րդ հոդվածում: Մեկնաբանման նպատակների համար կարևոր է այն, որ, կատարելով կամքի օբյեկտիվացման գործառույթ, կամարտահայտությունը, անկախ դրա ձևից, հաղորդում է հասցեատիրոջը անձի ներքին կամքի բովանդակությունը²: Այս ենթատեքստում սուբյեկտիվ մոտեցման էությունն այն է, որ հաստատվի **դիմողի իրական կամքը այն ստացողի հասկացողության տեսանկյունից (*natürliche Auslegung*)** :

Ինչպես նշում են Կ. Վ. Կանարիսը և Հ. Կ. Գրիգոլեյթը, ընդհանուր կանոնի համաձայն՝ հայտարարություններն արվում են ոչ թե **կողմնակի անձի** կողմից ընդունելի և հասկանալի լինելու, այլ որոշակի հասցեատիրոջ համար: Այդ իսկ պատճառով տրամաբանական է ընդունել հասցեատիրոջ համապատասխան տեսակետը, քանի որ պայմանագիրը համարվում է հաղորդակցման ակտ միայն որոշակի կողմի հետ և շոշափում է միայն նրա շահերը³:

Համանման դիրքորոշում է արտահայտում նաև Ա. Լյուդերիցը, որը հղում կատարելով գերմանական իրավագիտության նախահայրերից Ռ. Ֆոն Յերինգին, նշում է՝ մեկնաբանման ժամանակ որոշվում է ոչ թե այն հարցը, թե ինչն է խոսողի հայտարարության իմաստը, այլ այն, թե ինչպես պետք է կոնտրադենտը հասկանար հայտարարությունը նրա առջև բացված հանգամանքներին համապատասխան⁴:

Իսկ այդ դեպքում ինչպե՞ս հասկանալ մի շարք օրենսդրություններում ամրագրված՝ կողմերի *ընդհանուր կամք* ձևակերպումը: Ենթադրվում է, որ անհրաժեշտ է առաջնորդվել այն դրույթով, որ կամքը և կամահայտնությունը անհատական հասկացություններ են, և կամքի կրողը կարող է լինել միայն մի անձ, ուստի կրելելով կամքը, այդ թվում նաև ընդհանուր կամքը տեսական վերացարկումներ են: Պրակտիկայում կողմերի ընդհանուր կամքը հաստատելիս ուսումնասիրվում է դիմող կողմի (օֆերենտ) կամահայտնությունը հասցեատեր կողմի (ակցեպտանտ) տեսանկյունից: Այլ կերպ ասած՝ կողմերի *իրական ընդհանուր կամքի* տակ պետք է հասկանալ դիմող կողմի էմպիրիկ կամքը՝ սահմանափակված այն նշանակությամբ, որը հասանելի է եղել հասցեատեր կողմի հասկացողությանը:

Միևնույն ժամանակ պետք չէ բացարձականացնել հասցեատեր կողմի տեսակետը ի վնաս դիմող կողմի շահերի, որը կարող էր բավարար չափով հոգատարություն և շրջահայացություն չցուցաբերել դիմող կողմի կամարտահայտությունը հասկանալու համար: Հաշվի առնելով դա՝ ո՛չ նշանակությունը, որը դրված է դիմող կողմի կամարտահայտության մեջ, ո՛չ հասկացողությունը, որը ծագել է հասցեատեր կողմի մեջ, առանձին-առանձին, առանց հարաբերակցման չեն կարող ուսումնասիրվել: Այս հանգամանքների վրա ուշադրություն են դարձնում նաև Կ. Վ. Կանարի-

¹Տե՛ս *Маник А.* Развитие и критика учения о волеизъявлении // Вестник гражданского права. 2008. N 4. էջ 198:

²Տե՛ս *Панова А.А.* К вопросу о категориях воли, волеизъявления и порока воли в теории юридической сделки // Вестник гражданского права. 2011. №1. էջ 62:

³Տե՛ս *Grigoleit H.C., Canaris C.-W.* Interpretation of Contracts. 2010. էջ 5:

⁴Տե՛ս *Lüderitz A.* նշված աշխատությունները, էջ 278:

սը և Հ. Կ. Գրիգոլեյթը. հնարավոր չէ ուղղակի հղում կատարել դիմող կողմի ներքին կամքին, եթե հասցեատերը այլ կերպ է հասկացել հայտարարությունը: Եվ հակառակը. հասցեատիրոջ հասկացողությունը չի կարող ինքնին պարտադրող լինել, եթե դա տարբերվում է դիմող կողմի հասկացողությունից¹:

Այս մոտեցումը փոխզիջումային որոշում է դիմող կողմի և հասցեատեր կողմի միջև, որը հնարավորություն է տալիս դատարանին հավասարակշռվածություն ապահովել այն դեպքում, երբ կողմերից յուրաքանչյուրը հավասար պայմաններով կարող է ներկայացնել ապացույցներ առ այն, թե ինչպիսին է եղել իր իրական կամքը, և արդյո՞ք կարող էր դա ընկալվել հայտարարվող նշանակությամբ:

Եթե սուբյեկտիվ տեսության նման մոտեցումը գերմանական իրավունքում ձևավորվել է Գերմանիայի Գերագույն դատարանի մակարդակով Կանոնագրքի համապատասխան նորմերը մեկնաբանելիս², ապա մի շարք միջազգային փաստաթղթերում այն ուղղակիորեն արտահայտվում է տեքստում: Այսպես, ապրանքների միջազգային առուվաճառքի մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սույն կոնվենցիայի նպատակների համար կողմի հայտարարությունները և այլ վարքագիծը մեկնաբանվում են նրա մտադրությանը համապատասխան, **եթե մյուս կողմը գիտեր կամ չէր կարող չիմանալ, ինչպիսին է եղել այդ մտադրությունը**³:

Եվրոպական պարտավորական իրավունքի սկզբունքների 5:101 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե մի կողմը ուներ մտադրություն պայմանագրին տալ կոնկրետ նշանակություն, և պայմանագրի կնքման պահին մյուս կողմը չէր կարող չիմանալ առաջին կողմի նման մտադրության մասին, ապա պայմանագիրը մեկնաբանվում է առաջին կողմի մտադրություններին համապատասխան: Համանման կարգավորում կա նաև DCFR-ի 8:101 հոդվածի 2-րդ մասում: ՈւՆԻԴՐՈՒԲ-ի սկզբունքներում նույնպես ամրագրված է նման կանոն կողմի հայտարարության և այլ վարքագծի մեկնաբանման վերաբերյալ⁴:

Հետաքրքիր է ԱՄՆ-ի պայմանագրային իրավունքի մասնավոր կողմավորումը, որը հնարավորություն է տալիս եզրահանգել, որ պայմանագրի մեկնաբանման տեսության զարգացումը միտված է առավել շատ սուբյեկտիվ մոտեցման կիրառմանը: Այսպես, համաձայն պայմանագրային իրավունքի երկրորդ կողմի ֆիլոսոֆիայի 201-րդ հոդվածի 2-րդ կետի (*Restatement (Second) of the Law of Contracts*) երբ կողմերը տարբեր նշանակություն են դրել խոստման, համաձայնության կամ պայմանի մեջ, այն մեկնաբանվում է այնպիսի նշանակությամբ, որին հղում է տալիս կողմերից մեկը, եթե համաձայնության կնքման պահին՝

ա) այդ կողմը չգիտեր այն նշանակության մասին, որը վկայակոչում էր մյուս կողմը, և մյուս կողմը գիտեր այն նշանակության մասին, որը վկայակոչում էր առաջին կողմը,

բ) այդ կողմի համար պատճառներ չկային իմանալու այն նշանակության մասին, որը վկայակոչում է մյուս կողմը, և մյուս կողմի համար կային հիմքեր՝ իմանալու այն նշանակությունը, որը վկայակոչում է առաջին կողմը⁵:

Սուբյեկտիվ մոտեցման բավականին լավ օրինակ են բերում DCFR-ի մեկնաբանությունների հեղինակները⁶:

¹ Տե՛ս *Grigoleit H.C., Canaris C.-W.* նշվ. աշխ. էջ 5:

² Տե՛ս *Vogenauer S.* նշվ. աշխ. էջ 17:

³ Տե՛ս <https://www.uncitral.org/pdf/russian/texts/sales/cisg/V1056999-CISG-e-book-r.pdf>:

⁴ ՈՒՆԻԴՐՈՒԲ-ի սկզբունքներում (4.1, 4.2 հոդվածներ) տարբերություն է դրվում պայմանագրի և կողմերի հայտարարությունների մեկնաբանման միջև: Սա նախատեսված է, երբ հնարավոր չէ որոշել, թե կողմերից որ մեկն է վիճելի պայմանը մտցրել պայմանագրի տեքստի մեջ:

⁵ Տե՛ս <https://www.nylitigationfirm.com/files/restat.pdf>:

⁶ Տե՛ս Principles, Definitions and Model Rules of European Private Law. Draft Common Frame of Reference (DCFR). Full Edition / Chr. von Bar, E. Clive. Vol. I. էջ 555:

Մորթե ապրանքների շուրջ կնքվում է առուծախի պայմանագիր, որի համաձայն՝ վաճառողը գնորդին առաջարկում է մորթի՝ յուրաքանչյուր կիլոգրամը 1 ֆունտ ստերլինգով: Համանման պայմանագրային հարաբերություններում մորթու գինը սահմանվում է ոչ թե քաշով, այլ քանակով: Հաշվի առնելով, որ մեկ կիլոգրամը մոտավորապես 6 մորթի է, կողմերի սահմանած գինը տարօրինակորեն ցածր է: Ղատարանը հանգում է այն եզրակացության, որ կողմերը 1 ֆունտ ստերլինգ սահմանել են մեկ միավորի համար՝ չնայած պայմանագրի բառացի նշանակությանը:

Այս օրինակում ակնհայտ է, որ վիճելի պայմանի հասցեատեր կողմը (գնորդ) գիտեր, որ չնայած պայմանագրի տեքստում թույլ տրված սխալին՝ վաճառողի կամքը միտված է եղել վաճառելու մորթու մեկ միավորը մեկ ֆունտ ստերլինգի դիմաց: Այս իրավիճակում գնորդի մոտ չի եղել որևէ հիմք ենթադրելու, որ վաճառողը ցանկացել է ապրանքը վաճառել շուկայականից վեց անգամ ցածր գնով՝ հրաժարվելով պրակտիկայում ձևավորված քանակային վաճառքից: Կարծում ենք, որ նման եզրահանգումը հիմնավորող հանգամանք կարելի է համարել նաև սահմանված գնի և մորթու կիլոգրամի ու հատի հարաբերակցությունը. 1 հատ մորթին իրականում արժեք 1 ֆունտ ստերլինգ: Հետևաբար՝ այստեղից ևս գնորդը կարող էր ենթադրել, որ վաճառողը նկատի է ունեցել 1 հատ, այլ ոչ թե 1 կիլոգրամ:

Սակայն սուբյեկտիվ մոտեցման ոչ բոլոր դեպքերն են այսքան ակնհայտ: Պրակտիկայում շատ կարևոր է այն հարցը՝ ինչպես պետք է բաշխվի կողմերի միջև այն հանգամանքների ապացուցման բեռը, որոնք վերաբերում են կողմի վիճելի կամարտահայտությանը: Բերենք մեկ օրինակ.

Համբուրգի հողային դատարանի քննած գործերից մեկով¹ գերմանացի ձեռնարկատերը (գնորդ), գործելով *AMG Import Export* ընկերության անունից, իտալացի ձեռնարկատիրոջից պատվիրել է տեքստիլի խմբաքանակ: Ավելի ուշ ձեռնարկատերը փոխանցել է վաճառողին մուրհակ՝ ստորագրված *AMG (GmbH)* սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից: Հաստատվել է, որ *AMG Import Export* ընկերությունը երբեք չի եղել: Վաճառողը հայց է ներկայացնում ձեռնարկատիրոջ դեմ պահանջելով պայմանագրի գնի և տոկոսների հատուցում: Պատասխանողը մերժում է այդ պահանջով անձնական պատասխանատվությունը՝ հայտնելով, որ գործել է *AMG (GmbH)* սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անունից: Կիրառելով Կոմվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին կետը՝ դատարանը որոշում է, որ այդ հայտարարությունը չի կարող համարվել արված *AMG (GmbH)-ի* անունից: Բավարարելով վաճառողի հայցը՝ դատարանը նշում է, որ այն հարցն իրականում ուներ գնորդն այն թաքնված կամքը գործել *AMG (GmbH)-ի* անունից, պետք է թողնել առանց քննության, քանզի բոլոր դեպքերում վաճառողի մոտ բացակայում էր ինչպես այդ կամքի իմացությունը, այնպես էլ հնարավորությունը՝ իմանալու դրա բովանդակության մասին:

Ղատարանը այս գործով առաջնորդվել է այն տրամաբանությամբ, որ տեքստիլ վաճառողը չգիտեր գնորդի կամքի մասին, քանզի գնորդը հակառակը չի ապացուցել: Այլ խոսքով՝ դատարանը գտել է, որ կողմը, որը հղում է կատարում իր կամքին՝ գործելու ընկերության անունից, հայտնելով, թե մյուս կողմը գիտեր կամ չէր կարող չիմանալ նման բովանդակության մասին, պետք է ապացուցի դա: Այսինքն՝ հասցեատիրոջ կողմից կամքի բովանդակությունը հասկանալը ապացուցելու բեռը դրվում է դիմող կողմի վրա:

Թեև պետք չէ պնդել, որ գոյություն ունի հասցեատեր կողմի վիճելի պայմանը ճիշտ հասկանալու կանխավարկած, որովհետև այդ կողմն իր հերթին պետք է ներկայացներ ապացույցներ, որ չգիտեր և չէր կարող իմանալ վիճելի պայմանի այն նշանակության մասին, որը պնդում է դիմող կողմը:

¹ St'u Landgericht Hamburg, Germany, 26 September 1990 (Case Law on UNCITRAL, далее - CLOUT no. 5). (http://www.uncitral.org/uncitral/en/case_law.html) :

Բոլոր դեպքերում այն հանգամանքների ապացուցման բեռը, որոնք ազդում են կամահայտնության ձևավորման վրա, կրում է համապատասխանաբար այն անձը, որը պնդում է այնպիսի փաստերի առկայության մասին, որոնք համապատասխանում են ապացուցման ընդհանուր դատավարական սկզբունքին¹:

Բացի վիճելի պայմանի ապացուցման բեռի բաշխումից՝ պրակտիկայում կարևորվում են մյուս կողմի համար հասանելի ձևակերպում ապահովելու դիմող կողմի՝ բավարար միջոցներ ձեռնարկելուն և հակառակը՝ հասցեատեր կողմի վիճելի պայմանը բացահայտելու համար: Գերմանական գրականության մեջ հաստատելու համար, թե ով է կրում վիճելի պայմանի ընկալման անհամապատասխանելիության ռիսկը, կամքի ինքնավարության ասպեկտներից էլակետային է համարվում *հայտարարությունների պրոտահայտման ազատությունը (Formulierungsherrschaft)*: Եթե վիճելի պայմանի հեղինակ կողմն ունի հնարավորություն ձևակերպել իր կամքը պայմանագրի տեքստում, ապա տրամաբանական է, որ հենց նա էլ պետք է կրի համապատասխան ռիսկը²:

Հյուրանոցային պատվերի հայտնի օրինակում³ (երբ պատվիրվում է երկու սենյակ՝ երեք մահճակալով), այս կանոնի կիրառմամբ պատվիրատուն պետք է կրի պատասխանատվությունը իր պատվերի ձևակերպման անորոշության համար, որը թույլատրում էր երկու հավասար նշանակություն: Մեկ այլ դեպք. Համբուրգի հողային դատարանի քննած գործում գնորդից պահանջվում էր միջոցներ ձեռնարկել, որ վաճառողին պարզ լիներ նրա կամքը՝ գործելու երրորդ անձի անունից և ի շահ նրա: Մյուս կողմից հարց է առաջանում՝ արդյո՞ք պետք է սահմանափակվել հասցեատեր կողմի փաստացի ընկալմամբ, թե՞ նրանից պետք է պահանջել անհրաժեշտ միջոցների ձեռնարկում՝ ճիշտ ընկալվելու համար: Եթե հաշվի առնենք միայն հասցեատեր կողմի հասկացողությունը, ապա դա կարող է լինել անարդար դիմող կողմի համար, քանզի հասցեատեր կողմը կարող է սխալ հասկանալ պայմանագիրը: Այսպես, հյուրանոցի օրինակում սեփականատիրոջից պահանջվում էր ձեռնարկել միջոցներ՝ հստակեցնելու համար, թե հատկապես ի՞նչ համարներ է ցանկանում պատվիրել անձը: Համբուրգի հողային դատարանի քննած գործում տեքստիլի վաճառողից պահանջվում էր միջոցներ ձեռնարկել ստուգելու համար վաճառողի լիազորությունը:

Վերոնշյալ հանգամանքները թույլ են տալիս եզրակացնել, որ ինչպես դիմող կողմից, այնպես էլ հասցեատեր կողմից հնարավոր է պահանջել միջոցների ձեռնարկում՝ սեփական կամքի բացահայտման և կամահայտնության իմաստի ճշգրտման համար: Այդպիսի որոշումը համապատասխանում է պայմանագրի *կողմների երկկողմանի պատասխանատվության* գաղափարին, որի համաձայն՝ պայմանագիր կողմերից պահանջվում է ցուցաբերել բավարար և անհրաժեշտ մանրակրկիտություն և շրջահայացություն պայմանագրի կնքման պահին: Սակայն պետք է նաև փաստել, որ կողմերի հոգատարությունը և շրջահայացությունը կարող են տարբերվել ըստ հանգամանքների՝ գործարքի տեսակ, կողմի կարգավիճակ, հասանելի տեղեկություն և այլն:

¹ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պարտավոր է ապացուցել իր պահանջների և առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով կամ այլ օրենքներով:

² Այս մոտեցումը դրված է արևմտյան իրավակարգերում լայնորեն տարածված և կիրառվող այն կանոնի հիմքում, որի համաձայն՝ վիճելի պայմանը պետք է մեկնաբանվի հակառակ նրան, ով պայմանագրի մեջ մտցրել է այդ պայմանը (*contra proferentem*):

³ Տե՛ս Larenz K, Wolf M. – Allgemeiner Teil des Bürgerlichen Rechts, München 2004, էջ 391:

Կարող ենք եզրակացնել, որ պայմանագրի մեկնաբանման ժամանակ, երբ դատարանը կիրառելու է սուբյեկտիվ տեսությունը, վերջինիս հիմնական խնդիրն է հաստատել վիճելի պայմանի հեղինակությունը և դրա իմաստի ապացուցման բեռը բաշխել հայտարարողի և հասցեատիրոջ միջև՝ հաշվի առնելով կողմերից յուրաքանչ-յուրի ցուցաբերած շրջահայացության և հոգատարության աստիճանը:

Իրական կամքի հաստատումը համարվում է մեկնաբանման առաջնային խնդիրը, որը հավաստվում է նաև Կիեմնայի կոնվենցիայում, ՌԻՆԻԴՐՈՒԲ-ում, DCFR-ում առկա նորմերի հիերարխիան: Այսպիսի որոշումը պայմանավորված է պայմանագրի համար հիմնաքարային համարվող կամքի ինքնավարության սկզբունքով: Այսպես, եթե դիմող կողմը պնդում է իր կամքի որոշակի նշանակության մասին, և դատարանի կողմից հաստատվում է, որ հասցեատեր կողմը գիտեր և չէր կարող չիմանալ նման նշանակության մասին, դատարանի որոշման հիմքում պետք է դրվի վիճելի պայմանի այն նշանակությունը, որը համապատասխանում է հայտարարողի իրական կամքին՝ հասանելի հասցեատիրոջ հասկացողությանը: Այս եզրահանգումը համապատասխանում է արևմտյան իրավակարգերում հայտնի *falsa demonstratio non nocet cum de corpore constat* հայեցակարգին, որի համաձայն՝ սխալ բնութագրումը չի գրկում պայմանագիրն իրավաբանական ուժից, եթե հայտնի է՝ ինչ առարկայի է այն վերաբերում¹:

Գերմանական դոկտրինում այս կոնցեպցիայի կիրառումը սովորաբար բացահայտվում է այն ապրանքի վաճառքի հայտնի գործով, որին կողմերը անավել էին *haakjöringsköd* : Առուճախի պայմանագրի երկու կողմերն էլ այն կնքելիս առաջնորդվել են այն բանով, որ *haakjöringsköd* նշանակում է կետի միս, սակայն նորվեգերեն այն նշանակում է շնաձկան միս: Պարտավորեցնելով հատուցել վնասները վաճառողին, որը մատակարարել էր շնաձկան միս, Գերմանիայի գերագույն դատարանը նշեց, որ կողմերը կնքել են կետի մսի վաճառքի պայմանագիր, քանզի դա արտացոլում է նրանց ընդհանուր կամքը²:

Այս որոշման առիթով Կ. Ցվայգերտը և Հ. Կյոտցը նշում են, որ այդպիսի մեկնաբանումը հիմնականում համապատասխանում է կողմերի շահերին, քանզի այս դեպքում հղում է կատարվում նրանց միջև համաձայնեցված, թելուզև պայմանագրում չֆիքսված նշանակությանը³: Միևնույն ժամանակ սուբյեկտիվ մոտեցման կիրառումը ուղեկցվում է ապացուցման բարդություններով այն առումով, որ պայմանագրի կողմը գիտեր կամ չէր կարող չիմանալ ինչպիսին է եղել մյուս կողմի իրական կամքը:

Առաջին, ներկայացնել ապացույցներ առ այն, որ մյուս կողմը գիտեր կամ պետք է իմանար վիճելի պայմանի՝ ներկայացվող նշանակության մասին, և ապացուցել հակառակը նույնպես բավականին բարդ է: Եթե նույնիսկ մեկնաբանման վեճի ժամանակ կողմերը ազատ են ապացույցներ ներկայացնելու հարցում, քանի որ կամքի ձևավորման գործընթացը ներքին բնույթ ունի, գտնել այդպիսի, ոչ միշտ է հնարավոր:

Երկրորդ, սուբյեկտիվ մոտեցման կիրառումը կարող է էականորեն դժվարանալ, երբ հնարավոր չէ սահմանել, թե կողմերից որ մեկն է պատրաստել պայմանագրի նախագիծը կամ վիճելի պայմանը, քանզի դա կիրառելու դեպքում դատարանը պետք է հաստատի վիճելի պայմանի հեղինակին և հասցեատիրոջը: Նման ապացույցների բացակայության պարագայում բարդանում է նաև ապացուցման բեռի բաշխումը:

¹Տե՛ս <https://definitions.uslegal.com/f/falsa-demonstratio-non-nocet-cum-de-corpore-constat/>:

²Տե՛ս *Vogenaue S.* նշվ. աշխ. էջ 14:

³Տե՛ս *Цвайгерт К, Котц Х.* Введение в сравнительное правоведение в сфере частного права, Т. 2, М. 1998, էջ 111:

Երրորդ, ժամանակակից պայմանագրային պրակտիկայում ձեռնարկատիրական բարդ գործարքների պայմանների մշակմանը մասնակցում են ոչ թե կողմերը, այլ նրանց իրավաբանները: Այսպիսի իրավիճակներում խոսել կողմերի իրական կամքի մասին, առավել ևս ներկայացնել ապացույցներ նույնպես խնդրահարույց են:

Վերոնշյալ պրակտիկ բարդությունների պատճառով մեկնաբանման սուբյեկտիվ մոտեցումը ոչ հաճախ է կիրառվում¹: Մեր կարծիքով՝ սուբյեկտիվ մոտեցումը պետք է կիրառվի այն դեպքերում, երբ իրական կամքի նշանակությունը այնքան ակնհայտ է, որ հասցեատեր կողմը չէր կարող պայմանագիրը այլ կերպ հասկանալ:

Մի շարք դեպքերում սահմանափակվել սուբյեկտիվ մոտեցմամբ անհնար է: Այսպիսի դեպքերում իրական կամքի հետագա որոնումը արդարացված չէ, և պետք է դիմել մեկնաբանման օբյեկտիվ մոտեցմանը: Այսպես, պրոֆեսոր Կ. Լարենցը նշում է՝ հայտարարության օբյեկտիվ գնահատումը հիմնված իրական կամքի վրա, հնարավոր է այնտեղ, որտեղ իրական կամքը չի ճանաչվում կոնտրադեմտի կողմից²:

СУБЪЕКТИВНАЯ ТЕОРИЯ ТОЛКОВАНИЯ ДОГОВОРА

Давит Оганян

*Аспирант Образовательного комплекса
Полиции Республики Армения*

Данная статья посвящена выявлению и исследованию сущности субъективной теории толкования договора. В статье анализируются законодательный опыт иностранных стран, а также международные унификации договорного права. В результате данного анализа обсуждается возможность разделения субъективной теории толкования договора.

В частности, автор обсуждает те предпосылки, которые лежат в основе субъективной теории, а также выявляет положительные и отрицательные аспекты этой теории.

¹ Ինչպես նշվում է ԱՄՆ 11-րդ դատական շրջանի Վերաքննիչ դատարանի որոշման մեջ սուբյեկտիվ և օբյեկտիվ տեսությունների հարաբերակցության առնչությամբ (Վիեննայի կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետեր), դեպքերի մեծ մասում բացակայում են այն իրավիճակները, երբ կողմերը գիտակցում են սուբյեկտիվ մտադրությունը: Այդ իսկ պատճառով դրանցում պետք է կիրառվի 8-րդ հոդվածի 2-րդ կետը, իսկ որոշման հիմքում պետք է դրվեն օբյեկտիվ ապացույցները: Տե՛ս Federal Court of Appeals for the Eleventh Circuit, United States, 29 June 1998 (CLOUT no. 222):

² Տե՛ս *Larenz K.* Die Methode der Auslegung des Rechtsgeschäfts: Zugleich ein Beitrag zur Theorie der Willenserklärung. էջ 29:

THE SUBJECTIVE THEORY OF INTERPRETATION OF CONTRACT

Davit Ohanyan

PhD Student at the Educational Complex of Police of the RA

This article is devoted to the study and research of the essence of the subjective theory of interpretation of contract. In the research have been analyzed the legal experience of foreign countries and international codifications about contractual law and elements, which are of the origin of this institute. As a result, the author discusses the opportunity of the division of subjective theory of interpretation of contract.

The author, particularly, discusses the prerequisites, which are basics of this theory and recovers negative and positive aspects of this theory.

Բանալի բառեր – պայմանագրի մեկնաբանում, պայմանագրի մեկնաբանման կանոն, մեկնաբանման սուբյեկտիվ նախադրյալ, պայմանի հեղինակություն, ընդհանուր կամք

Ключевые слова – толкование договора, правила толкования договора, субъективная предпосылка толкования, авторство условия, общая воля

Key words – interpretation of contract, the canon of interpretation of contract, subjective prerequisite of interpretation, the authority of the term, general will